ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

6 մայիսի 2015 թվականի N 46-Ա

ՍԱՇԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ << ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. մայիսի 5-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Սաշիկ Խաչատրյանին 2015թ. մայիսի 7-ից նշանակել «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

Հիմք. Ս.Խաչատրյանի անձնական դիմումը:

2.2015թվականի մայիսի 7-ից «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նորա Իվանյանին ազատել տնօրենի պարտականությունների կատարումից:

3.Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հովհաննիսյան Հարություն	մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Գևորգյան Նունե	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Ասրյան Աշոտ	մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
Խաչատրյան Սաշիկ	<<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն, ընդունող
Իվանյան Նորա	<<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, հանձնող:

4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ.մայիսի 6
ք. Կապան